№ 35 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1894 № 35

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„Շաւղի“ ուղղութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընտանեկան Դաստիարակութիւն. Նամակ Մարաղայից:—Նոր մակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. „Դէյլի Նիւզ“ լրագրի կարծիքը. Արտաքին լուրեր.—Բանասիրական. Փայտակարան կամ Ղարադաղ գաւառը.—Յայտարարութիւններ:

„ՇԱՒԻՂԻ“ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

—

Շատեր մեզ դիտողութիւն են անում, և դոցա մէջ կան „Շաւղի“ բարեկամներ թէ մեր ուղղութիւնը սխալ է և վնասաբեր, և թէ „Շաւիղը“ թիւր շաւղի մէջ է ընկել այդպէս քննադատելով ամեն երևոյթ, քննադատելով անձնաւորութիւններ (թէև առանց անունները տալու) և թէ մի այնպիսի փոքրիկ հասարակութեան մէջ որպէս Թէհրանում, անմիջապէս որ մարդ իւր բերանը բանայ ամեն մարդ գիտէ թէ ում վերայ է խօսում:

Մենք կամենում ենք մի քանի խօսքով բացատրել „Շաւղի“ և տեղհասարակ ամեն լրագրի կոչումը, և տալ մեր պատճառները թէ ինչու նախադասում ենք ենթարկուիլ բոլոր քննադատուած անձնաւորութիւնների ատելութեան քան թէ պակասաւոր գտնուիլ լրագրական կոչման մէջ:

Հասարակական հաստատութիւնների վերաբերութեամբ ընդհանրապէս լրագիրը պէտք է բռնէ ոչ թէ ներբողների խօսողի դերը,—որովհետև այդ կատարելապէս անօգուտ է,—այլ մանաւանդ մի դիտողի, մի խիստ կրիտիկոսի և անխնայ քննադատի դերը: Ինչ որ լաւ է, լաւ է արդէն, և կարօտութիւն չունի անհատնում ներբողների. ինչ որ վատ է, սխալ է, կարօտ է անվերջ քննադատութեան, մինչև որ պակասութիւնը բարձուի մէջտեղից: Մամուլը այն բովն է որի միջից անց են կենում բոլոր հաստատութիւնները, բոլոր ընկերական երևոյթները, զտուած, մաքրուած իւրեանց պակասութիւններից և մօտեցած կատարելութեան. ի հարկէ չէ կարելի բովից անցնել առանց քիչ թէ շատ այրուելու, առանց ցաւ զգալու:

Մեզ յայտնի է որ այն բոլոր անձնաւորութիւնները որոնք քննադատւում են, որչափ և իցէ քաղաքավար կերպով, պահում են իւրեանց սրտերում մի տեսակ ոխ լրագրի կամ գրողների դէմ, և ինչ էք կարծում. մի հաճելի բան է գրողների համար այդպէս իրանք իրանց ենթարկել շատ անգամ նոյն իսկ իրանց բարեկամների դժկամակութեան: Մի հաճելի դեր է այդպէս ընդհանուր ախոյեանի դեր կատարել: Հրապարակագրի հոգեկան վիճակին պէտք է կատարելապէս անգէլ լինել այդպիսի ենթադրութիւն անելու համար, մանաւանդ պարսկահայերի մէջ գրող մի հրապարակագրի պարագայում, ուր ամենափոքրիկ, ամենափափուկ նրկատողութիւնը ընդունւում է հայհոյանքներով և „անկցի“-ներով:

Բայց, մի երկրում ուր ամեն մարդ սովոր է լռել հասարակական երևոյթների մասին որ մի գուցէ ոչ-անձնական խնդրի մասին մէկի սիրտը կոտրէ, ուր բացի մի շատ փոքրաթիւ խմբից, հասարակութեան մեծամասնութիւնը քաղաքավարական պարտք է համարում կեղծաւոր դիրք բռնել դէպի ամեն կուսակցութիւնները, գաղափարակից ցոյց տալ իրան ամեն խօսողի հետ, ուր, մէկ խօսքով, ոչ մի խելօք մարդ չէ ուզում վատամարդ լինել իւր խօսակցի, խնամու, ազգականի, յաճախորդի, յարգողի հետ, այն էլ ինչ, ազգային գործերի խաթէր համար, այդպիսի երկրում ասացէք իրան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՂԱՐԱԴԱՂ

(Շարունակութիւն 34 թուից)

—

Պատարագից յետոյ պատրաստւում է ընդհանուր սեղան, այս սեղանի վերայ նստում են բոլոր արական սեռի պատկանողները: Ամեն մի օղտից այստեղ մի բան պէտք է բերուի, հաց, մատաղ եւ այլ կերակուրներ:

Սեղանը վերջանում է, տէրտէրների եւ տիրացուների վերջին օրհնութեամբը:

Սեղանից յետոյ հրապարակի վերայ ածում են զուռնան, երիտասարդները այստեղ իրար հետ մրցութիւն են անում. ամբողջ ժողովուրդը կանգնած նայում է: Ցաղթանակ տանողի պատիւը վերաբերում է եւ իւր գիւղացուն. ամենից վերջը ածում է հրաժեշտի եղանակը եւ ժողովուրդը իրար մնաք բարեւ ասելով ցրւում է:

Մոռացայ ասել, որ այստեղ եկել էր եւ մեզ նախածանօթ պ. Գ. Սարգսեանը, իւր սկսած գործի համար իմ հարցիս պատասխանեց թէ յաջողուել է եւ թէ արդէն սկսած են ուսումնարանի շինութիւնը. այժմ ուսուցիչ է գնացած նոյն գիւղը, որի կէս ոռճիկը նոյն պ. Սարգսեանն է տալիս: Ես դարձեալ Օղա դարձայ:

Գիւղին մօտենալուց, արական սեռը կանգ առաւ, եւ սկսեցին հրացանաձգութիւնը. բոլոր գիւղացիք հրացանաւոր են. մեծ մասը նոր ձեւի մարտինի ու բերդանկայ:

Հրացանաձգութիւնը տեւեց մինչեւ մութը ընկնելը. նա որ մի քանի անգամ կարողանում էր դպցնել նշանին նորա անունը աւելի հռչակւում էր գիւղի մէջ, իբրեւ լաւ ու հմուտ հրացան ձգող:

Սորանով վերջացան ուխտագնացութեան բոլոր արարողութիւնները:

Դ.

ԹՈՒՐՔԵՐԻ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՀԵՏ

Մենք վերջացրինք Տիզմաոի հայոց գիւղերը եւ պէտք է անցնէինք միւս գաւառակները: Բայց նախքան անցնելը, ցանկացանք այս գաւառակի մէջ եղած Թուրք ցեղերի մասին փոքր ինչ խօսել, որոնք մեծ կապ ունին հայոց կեանքի հետ, յոյս ունիմ որ յարգելի ընթերցողը այս մասին ներողամիտ կը գրտնուի, եւ ուշադրութեամբ կը կարդայ:

Այս ցեղերի մէջ նշանաւորները երեք են, տիզմաոցիք, հասանովցիք եւ քուրդեր:

Տիզմաոցիք. որոնք բնակւում են Աղաղանից ըսկսեալ մինչեւ Խանապատ, սոքա բաժանուած են փոքր ցեղերի, որոց անունները գրելը աւելորդ ենք համարում:

Տիզմաոցւոց մի մասը. որոնք բնակւում են, դաշտերում պարապւում են երկրագործութեամբ: Լեռնային մասը պարապւում է խաշնարածութեամբ իսկ Երասխի ափով ընկածները պարապւում են այգեգործութեամբ:

Հասանովցիք ընկած են Տիզմաոն եւ Մեշափարա գաւառակի մէջ, որը կոչւում է Հասանով:

Այս գաւառակը լեռնային լինելով ժողովուրդն էլ կատարեալ լեռնականների կոպիտ բնաւորութիւնները ունին:

Սոցա պարապմունքները զանազան են, խաշնարածութիւն, մասամբ երկրագործութիւն եւ գողու-

դրեմ, ինչ դիրք կուզէք որ „Շաւիղը“ բռնէր դէպի այդ երևոյթները։ Նա էլ պէտք է լաւամարդ լինելու համար լռէր ամեն բանի վերայ և երբեմն մի քիչ խունկ ծխել այս ինչ կամ այն ինչ մարդու համար որ խմբագրութեան հետ լաւ յարաբերութեան մէջ է։ Այդպիսի մի թերթ կուզենայիք։ Ոչ, աւելի լաւ է որ երբ և իցէ մի թերթ գոյութիւն չունենայ, քան թէ նա կատարէ այդ ստոր դերը։

„Շաւիղը“ մինչև այսօր քննադատող ուղղութիւնն է ընտրել, թէ ինչքան մեղմ կերպով, այդ կարող են դատել միայն անկողմնակալ ընթերցողները։

Գուցէ մենք սխալուած ենք մեր դիտողութիւնների մէջ, բայց որ և իցէ դէպքում մենք անկեղծ ենք գտնուել, և չենք դրժել լրագրական կոչման։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

—

Թէ որպիսի թիւր կարծիք է արմատացել աեղւոյս ժողովրդի մէջ դպրանոցի մասին, այդ ցոյց կը տան այն հայեացքները, որ նա ունի դէպի ուսումնարանը դէպի դպրանոցը առ հասարակ։ Ժողովրդի կարծիքով, մանուկը ուսումնարանի շէմքից իւր ոտքը ներս դնելու րոպէից՝ նորա դաստիարակութեան ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է այդ ուսումնարանի և նորա վարիչների վերայ. ուսումնարանն է միայն, ժողովրդի կարծիքով, այլ կարող է երեխային իւր ուզած դաղասարի մէջ սեղմելով՝ ցանկալի ձևը տալ նրան։ Իսկ թէ ինչու նոյն ուսումնարանի նոյն դաղասարի միջով հաւասարապէս անցնող աշակերտները տարբեր են լինում միմեանցից թէ բնաւորութեամբ և թէ դաստիարակութեամբ. ժողովուրդը սորա դէմ ևս պատասխանելիքը գտած է համարում. նա հասակակից և ընկերակից աշակերտների այդ աչքի ընկնող տարբերութիւնը յառաջացնում է ուսումնարանական զեղծումներից, հետևանք է համարում այն հայեացքների, որ ուսումնարանը վարող ուսուցչական կազմակերպութիւնը ունի դէպի իւր այսինչ կամ այն ինչ սաները կամ այս ինչ և այն ինչ մարդու որդին։ Սա մի ստոր զրպարտութիւն է, որ ոչ պարտաճանաչ ծնողները կամենում են դնել դպրոցական կազմակերպութեան վերայ, որպէս զի իրանք ազատուին ծնողական պարտականութիւնը չը կատարելու ծանր պատասխանատուութիւնից...։ Քանիցս անգամ պատահել է ինձ խօսել այս ինչ և այն ինչ աշակերտուհու ծնողաց հետ և հրաւիրել նրանց ուշադրութիւնը իրանց զաւակների զանազան պակասութեանց վերայ, որոնք յառաջանում են ընտանեկան դաստիարակութեան բացակայութիւնից, կամ աւելի լաւ է ասել՝ հէնց իրանք պատճառ են լինում իրանց զաւակների փչանալուն։ Բայց նոքա, այդ ծնողները, փոխանակ զգալու իրանց սխալը և ուղղուելով՝ թշուառ զաւակներին ազատելու, լեռ կորզելու կորստեան վիհի մէջ գահավեժելուց—իրանց արդարացնելու համար սկսել են զանազան ամբաստանութիւններ բառնալ դպրոցական կազմակերպութեան վերայ. և երբ ես նոյն աշակերտի ընկերակիցներից մի բարի օրինակ եմ բերել, ապացուցանելով որ դպրոցը ամեն ինչ բաշխում է իւր սաներին հաւասարապէս առանց խտրութիւն դնելու նրանց մէջ, այդ ոչ-պարտաճանաչ ծնողները էլ թոյլ են տուել իրանց կարծելու, թէ իմ յառաջ բերած օրինակների լաւութիւնը կախուած է նրանց ծնողաց դիրքից. թէ ինչու այս ինչ ուսուցիչը շատ լաւ է վարուում այս ինչ աղայի որդու հետ, իսկ իւր որդու հետ՝ ընդհակառակը՝ շատ կոպտութեամբ։ Այս կարծիքը ոչ-պարտաճանաչ ծնողաց կողմից մի ագեղ յաւակնութիւն է, կարծելու թէ ուսուցիչները կեղծաւորաբար են վերաբերում դէպի իրանց սաները և այդ է, որ ապազայում փչացնում է իրանց զաւակներին...։

Թէ աշակերտների ծնողները իրանց ոչ-պարտաճանաչութեամբ շատ անգամ իրանց զաւակներին փչացնելուց զատ՝ պատճառ են դառնում և բազմաթիւ այլ երեխայոց փչանալուն՝ շատ անգամ մենք դժբաղդութիւն ենք ունեցել նկատելու։ Հայրը կամ մայրը, իւր երեխայոց ներկայութեամբ, շատ անգամ՝ առանց խղճահարուելու՝ մեղանչելով իւր ծնողական կոչման դէմ, թոյլ է տալիս իրան այնպիսի լիշոցներ տալ, կամ այնպիսի հարցերի մասին խօսակցել, որոնք թէև երեխայի անբիծ և անարատ մտքին ըմբռնելի չեն, սակայն նորա բնական հետաքրքրութեան նիւթ են լինում՝ մինչև նա ժամանակից շատ վաղ, կարող կը լինի բաւարարութիւն տալ իւր այդ հետաքրքրութեանը...։ Երեխան արդէն բնութեան որոշած ժամանակամիջոցից վաղ գիտենալով շատ բաներ, որոնք անհամապատասխան են իւր հասակին՝ նշանակում է նա փչացաւ։ Բայց բաւական չէ, որ նա փչանում է իւր տգէտ ծնողների շնորհիւ, այլ փչացնում է իւր հետ և ընկերակիցներից շատերին։

Քանիցս անգամ այդպիսի ծնողներ (իբր թէ իրանց պարտականութիւնը լիովին կատարած լինելու համար), դիմել են դպրոցական վարչութեան, պահանջելով որ իրանց երեխայի այս ինչ և այն ինչ պակասութիւնը ուղղեն, կարծես դպրոցը հիմնուած լինի ոչ թէ գիտութիւն տալու համար, այլ զբաղուելու՝ տանը քսան ժամուայ ընթացքում քանդուածը՝ ուսումնարանում հինգ ժամում շինելով և աշխատել երեխայի ուղեղում ոչ թէ մի նոր բան մտցնել, այլ պահել այնպէս՝ ինչպէս նա կար։ Այո, դպրոցը կարող է կրթել, դաստիարակել և այդ կը յաջողուի նորան այն ժամանակ միայն, երբ ընտանիքը իւր սուրբ կոչման մէջ կը լինի, երբ ծնողք իրանց զաւակների վերա-

---

Թիւն։ Մարմնով պնդակազմ, ուժեղ եւ չափազանց կոպիտ են։ Իրանց յանախ կռուի դէնքն՝ կացինն ու դանակն է, որի մի հարուածովը մարդուն ցած են գլորում իբրեւ անասունի։

Իրանց կոպիտ վարմունքի պատճառով ոչ մի ցեղի հետ լաւ յարաբերութիւն չունին։

Քրդեր կամ Սունալիանլու, որոնք ընկած են Երասխ գետի ափով, Շաւլիից դէպի արեւելք։ Սորա պարապւում են կենդանապահութեամբ եւ մասամբ երկրագործութեամբ. իրանք վրանաբնակ են։

Ղարադաղի Թրքերի մէջ կրթեալ ցեղը սորա են որոնք տալիս են պարսից կառավարութեան բաւականաչափ հեծելազօրք, որոնք անուանի են Ատրպատականի զօրաց մէջ Ղարափափախ անունով։

Այս երկք ցեղերն էլ, որոնք բնակւում են հայոց գիւղերի մօտ շատ հաշտ կերպով են վերաբերւում դէպի հայերը. երբեմն այնպէս է պատահում, որ մի հայ՝ եւ մի Թուրք գիւղ միանում են եւ կռւում մի ուրիշ Թուրք գիւղի հետ։

Սորա համար եւ օրինակ կը բերեմ այստեղ, իմ

Օղա եղած ժամանակ պատահածը։

Լուսնկայ գիշեր էր, լուսնի աղօտ լոյսը իջել էր եւ լուսաւորում էր Օղա գիւղի հանդէպ ընկած փոքրիկ լեռան լանջերը։ Սալ դաղը արգելում էր լուսնին Օղային լոյս տալուց։

Բոլորը դուրս էին եկել տան առջեւ կտուրների վերայ նստոտել. գիւղացին լուսաբացից մինչեւ ընթրիքը պարապ ժամեր չունի, իսկ ընթրիքից յետոյ այլ եւս վերջացած են համարում օրուայ բոլոր գործերը։

Երիտասարդները հաւաքուել էին մի քանի տեղեր խմբուել եւ սկսել էին նուագել ու երգել։ Մի ուրիշ կտուրի վերայ երիտասարդուհիներն էին խմբուել եւ երիտասարդաց ձայները լսելով՝ իրանք էլ բարակ ձայնով պատասխանում էին նոցա երգերին։

Թռչունները լսելով՝ սորանց իրանք էլ եկել շրջապատել էին Օղայի չորս կողմը եւ իրանց ձայներն էլ խառնելով առաջինների հետ, որոց ներդաշնակութիւնը, փոխպնում էին յղնած գիւղացիների քունը։

Երգերի ամենաջերմ ժամանակը գիւղացիներից մէկը կոչեց. „տղայք հրացանի ձայն“։

Բոլորը լռեցին։ Լռեցին եւ թռչունները ու սկսեցին ականջ դնել, իմանալու թէ որտեղից էր հրացանի ձայնը։

Մի երկու րոպէից յետոյ լսուեց երկրորդ հրացանի ձայնը եւ նրա յետեւից շարունակաբար մի քանի ձայներ թնդացրին ձորերն։

Գիւղացիներից մի հմուտը հաստատեց, որ հրացանի ձայնը Նորաշէնի եւ Ցիժի կողմից է գալիս։ Բոլորը հաւատացին. որ անպատճառ մի վրտանգ է պատահած նոցա եւ սկսեցին զէնքի դիմել։

Գիւղացիք զինուած պատրաստուած էին եւ ճանապարհուելու վերայ էին դէպի այն կողմը, որ հրացանի ձայնը լսուեց. հանկարծ գիւղի հանդէպ բլրակի վերայ թնդաց մի հրացան եւ յետոյ մի մարդու ձայն։

(Կը շարունակուի)

բերմամբ կը նպաստեն նորան և ընտանեկան դաստիարակութիւնն նոյն աստիճաններով յառաջ կը գնայ, որպէս դըպրոցականը։ Ծնողք շատ լաւ պէտք է հասկանան, որ դպրոցը պատասխանատու է մինչև աշակերտը, իւր ոտքը նորա շէմքից դուրս կը դնէ, այնուհետև այդ պատասխանատուութիւնն ամբողջովին ընկնում է իրանց վերայ։ Ինչպէս որ նորանք իրաւունք են համարում՝ շարունակ դպրոցից հաշիւ պահանջելու, իրանց զաւակների դաստիարակութեան վերաբերմամբ, այնպէս և դպրոցը փոխադարձաբար իրաւունք ունի նորանցից հաշիւ պահանջել իւր սաների ընտանեկան դաստիարակութեան վերաբերմամբ...։ Եւ այն ծնողները, որոնք կամենում են իրանց զաւակները ապագայում բարի, առաքինի լինին, նորանց դաստիարակութիւնը չը պէտք է միայն ծանրաբեռնեն դպրոցի վերայ։ Ընտանիք և դպրոց. այս երկուսը համերաշխօրէն ձեռք ձեռքի տուած միայն կարող են հասարակութեան տալ օգնիւ անդամներ...։

Տիկին Օ. Ղազարեան

Դիավրէժ

ՆԱՄԱԿ ՄԱՐԱՂԱՅԻՑ

26 օգոստոսի 1894

Դավրէժից 18 մղոն հեռաւորութեան վերայ գտնւում է Մարաղան, նշանաւոր է սաբզի առևտրով, ունի 14,000 տուն բնակիչ, որից միայն 220 տունը հայեր են, որոնք պարապում են հիւսնութեամբ զինեգործութեամբ և օղեվաճառութեամբ։

Տեղւոյս հայերը լուսաւորութեան կողմից շատ զուրկ են, չը գիտեն իրանց մայրենի լեզուն խօսել, խօսում են մեծաւ մասամբ թուրքերէն, ունին իրանց մէջ, աղաւաղուած մի տեսակ հայերէն լեզու, որ օտարին անհասկանալի է, բայց և այնպէս կան ոմանք որ այդ էլ չը գիտեն։

Հագնւում են թուրքի ճաշակով. հայը թուրքից զանազանելու համար մարդ դըժուարանում է. ունին մի անշուք եկեղեցի և մի քահանայ. ժողովուրդը եկեղեցի գնալ չէ սիրում այլ փողոցում պատերի տակ նստել, բամբասել և ծխել։

Խեղճ քահանան եթէ դավրիժեցի հայ վաճառականը չը լինի ինչով կապրի։

Շնորհիւ դավրիժեցի հայ վաճառականների՝ ունին մի ուսումնարան մի դասարանով և մի ուսուցչով, սովորում են 40-ի մօտ աշակերտներ, ուսուցիչը լինելով տեղացի՝ մեծ ջանք է գործ դնում ուսումնարանի յառաջադիմութեան մասին

Խօսակցութիւն կայ որ մի ուսումնարան կառուցանեն մի քանի դասարաններով և մի ընթերցարան, որն ունի մօտ 200 կտոր գրքեր, և ստացւում է մի քանի հայկական թերթեր, յոյս ունիմ այս բարի ձեռնարկութիւնը չը յետաձգուի, որպէս զի մատաղ սերունդը կրթուելով խեղճ չը մնան իրանց մեծերի նման։

Ուսումնարանի դրամագլուխն է մօտաւորապէս 1000 թումանս. որը գտնւում է յայտնի անձանց մօտ տոկոսով. թող ընթերցողը չը կարծէ, որ մարաղացու շնորհիւ է այլ դավրիժեցի վաճառականի արդիւնքն է։ Պ. պ. Մ. Յոսիփեանցը և Մ. Աֆթանդիլեանցը, որ մի քանի տարիներից իվեր բնակւում են Մարաղայում, ամենայն կողմանէ մեծ պաշտպան են տեղւոյս հայերին. յիշեալները մտադիր են հանգստարանի մօտ գնել մի ազգային այգի, ի հարկէ փողի մեծ մասը ևս խեղճ վաճառականը պէտք է վճարէ, մարաղացին երբէք ազգային գործի վերայ մտածող չէ, միայն պատրաստ են ընկերովի տունը քանդելու։ Թող մարաղայցին չը մոռանայ վերոյիշեալ պարոնների դէպի իւրեանց վերայ ունեցած երախտիքը։

Քանի որ վաճառականութիւնը այստեղ մուտք չէր գործել, համարեայ 30 տարի սրանից առաջ հայը օտարի ստրուկն էր, բայց այժմ շնորհիւ դաւրիժեցի հայերի գրաւած դիրքին՝ ազատ են այդպիսի բռնութիւններից։

Մի քանի օրինակներից տեսանք, որ մարաղացու գոյութիւնը կախեալ է դավրիժեցի վաճառականներից, բայց ինչ արած որ չեն հասկանում նորանց գործունէութիւնը դէպի իրանց վերաբերմամբ, հոգ չէ, գործելով պէտք է չը հասկացողին հասկացնել, կը գայ մի ժամանակ և կը հասկանան։

Այստեղ առաջնորդական փոխանորդի պաշտօնը վարողը կաշառակեր մի մարդ լինելով. ժողովրդին շատ նեղութիւններ է տալիս և ժողովուրդը կեղեքելու միջոցներ ցոյց տալով, մի խօսքով մարաղացու կաշին մաշկում է. թող ս. առաջնորդը այդ մասին հոգայ և դորա պաշտօնը ուրիշին յանձնէ. որով վերջ կըտայ ժողովրդի մէջ ծագած երկպառակութեանց։

Դավրիժեցի

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շիրազ 31 օգոստոսի 94

„Շաւիղի“ 30 թւում Ուղեւորի ստորագրութեամբ կարդում ենք մի գրուած որոյ մէջ, Շիրազայ հայ հասարակութեան մասին վատ կարծիքներ է յայտնում, ուստի աճապարում եմ պ. Ուղեւորի գրուածում եղած թիւրիմացութիւնները պարզել:

Սովորաբար երբ ճանապարհորդները հասնում են այստեղ բնակւում են եկեղեցու բակում, յայտնի է որ եկեղեցում բնակւում է եւ վիճակաւոր քահանան. թէ արդեօք մտնող եւ ելնողն ինչ տուրք է վճարում քահանային կամ եկեղեցուն, հարցնելու է այդ նոյն իսկ պ. Ուղեւորից, եկեղեցին մտար եւ դուրս ելար ինչ վճարեցիր այդ ծերունի զանգատաւոր քահանային որ այսօր լեզուն երկարացրած խօսում է Շիրազայ հայ բնակիչների վերայ:

Շիրազաբնակ փոքրաթիւ հայ հասարակութիւնը ամենայն ուրախութեամբ յարգում պատւում եւ հիւրասիրում է ուղեւորներին, Շիրազայ հայերը մինչեւ իսկ մեծ հաճութեամբ հայթայթում են եւ նորանց ճանապարհի ծախսը եւ ամեն պիտոյքները. գտցողը թէ հուզ Հնդկաստանից լինի կամ Նոր-Ջուղայից: Աստուծոյ պարգեւեալ հիւրը շարունակ անպակաս է այստեղից եւ չը կայ մէկ տարի որ 40—60 ուղեւորներ, հարուստ, միջակ կամ աղքատ, չըմտնեն Շիրազ առանց յարգանք պատիւ եւ ասպնջականութիւն պահանջել, նորանց համար նամանաւանդ աղքատներին որ մատակար սրւում է նորանց սնունդ եւ հանգանակւում է նորանց համար դումարներ ճանապարհի ծախսի համար: Քանի ժամանակ առաջ նոյն ուղեւորի եղբայրն էր որ գալով այստեղ, անօք ու անօգնական եւ մինչեւ իսկ օրուայ հացի կարօտ: Ով նորան օգնեց տալով ապրուստ եւ դրամական օգնութիւն, իւր ճանապարհորդութիւնը շարունակելու համար:

Շիրազայ հայերը որ աղքատներին օգնում են ինչպէս է որ իրանց դժգոհ քահանայի ամսաթոշակը չեն կարողանում վճարել:

Մարգար Յ. Ամիրխանեանց

Դավրէժ 5 սեպտեմբերի 94

Հաճեցէք տեղ տալ ձեր շաբաթաթերթի մի անկիւնում երկտող գրութեանս, որը վերաբերում է „Շաւիղի“ 31-երրորդ համարի ներքին լուրերում Դավրէժից հաղորդուած մի սխալ լուրին:

Այդ մասում գրուած էր իբր թէ „Ընթերցասիրաց“ ընկերութիւնը իւր տուած ներկայացումից օգուտ է ունեցել 60 թուման, որից 30 թուման տուել է թատրոնական բեմին, 6 թուման մուզիկայի եւ 15 թուման այլ եւ այլ ծախսերի: իսկ զուտ արդիւնք մնացել է 9 թուման:

Ինչպէս երեւում է լրատուն բոլորովին անտեղեակ է գործի իսկութեանը: „Ընթերցասիրաց“ ընկերութիւնն ընդամենը արդիւնք է ունեցել 46 թ. որից 12 թուման տուել է թատրոնական բեմին, 6 թուման մուզիկայի եւ 13 թուման այլ եւ այլ ծախսերի. զուտ արդիւնք մնացել է 15 թուման:

Ա. Շահբազեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ կիրակի երբ քարոզ էր խօսում հայր Սահակ ծ. վ. Այվատեան, մենք դարձեալ հանդիսատես եղանք այն եղելութեան որին, մենք սովոր ենք և կար ժամանակից ի վեր, և որի վերայ „Շաւիղը“ արդէն մի անգամ ուշադրութիւն էր հրաւիրել։ Մեր խօսքը ծծկեր երեխաների վայնասունի մասին է, որ մայրերը սովորութիւն ունին առնել իրանց հետ, եկեղեցու երգասացութեան հետ նորանց ձայնակից անելու համար։ Մենք չենք հասկանում թէ ինչու քահանաները այսքան ժամանակ ուշադրութիւն չեն արել, և չեն անում եկեղեցու բարեկարգութեան այդ առաջին պայմանին։ Տօն օրերը, մանաւանդ, վայնասունը հասնում է իւր գագաթնակէտին։ Յոյս ունինք որ հայր Այվատեանի նկատողութիւնը առանց արդիւնքի չի անցկենալ, եթէ քահանաները կը շարունակեն ուշադրութիւն դարձնել այդ հանգամանքի վերայ։

Շատ ջանքեր են լինում հայր Այվատեանի կողմից Թէհրանում գոյութիւն ունեցող երկու կուսակցութիւնները միա-

ցնելու։ Մենք յաջողութիւն ենք մաղթում, բայց չ'որչափ վիճաբանութեան առարկան կը լինին ոչ թէ սկզբունքներ այլ անձնաւորութիւններ, միութեան գործն անկարելի կը լինի։

—

Ուրախութեամբ ծանուցանում ենք որ միրզա Ճէվատ խան Մօստէշար-էդ-Դօվլէի փոխարէն Ատրպատականի արտաքին գործոց Նախարարութեան պաշտօնեայ է նշանակուած վսեմ. Մօհամմէտ Իբրահիմ խան Մօավէն-էդ-Դովլէն։ Այս անձնաւորութիւնը ընդհանրապէս փայլուն է ուղիղ և անաչառ մարդու համբաւ, և նորա անուանումը մի նոր գրաւական է կայսերական կառավարութեան հոգածութեան դէպի իւր քրիստոնեայ հպատակները։ Մօավէն-էդ-Դովլէն Շահի մասնաւոր սենեկապետներից է, և վարել է զանազան վարչական պաշտօններ, ի միջի այլոց եղած է վաճառականական ատեանի նախագահ։ Նա որդին է եւրոպական համբաւ վայելող հանգուցեալ Ֆէրրուխ խան Ամին-էդ-Դովլէի, որ հաստատել է պարսից կառավարութեան և եւրոպական մի քանի երկիրների մէջ առաջին յարաբերութիւնները և կապուած է այժմ գոյութիւն ունեցող միջազգային դաշինքները

—

Դավրէժից մեզ գրում են, վերջապէս վերջացաւ Արամեան ուսումնարանների տեսչի խնդիրը՝ որով Արամեան ուսումնարանների հոգաբարձութիւնը և ս. առաջնորդը շատ երկար ժամանակ էր որ զբաղուած էին, վարձեցին պ. Գէորգ Զիլինգիրեանին վերջապէս Հայրիկի յանձնարարութեամբ։ Դեռ ուսումը չը սկսած ինտրիգաները արդէն սկսուել են Արամեան ուսումնարանների ուսուցիչների մէջ, Աստուած վերջը բարի անէ։

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ Փողի վիճակախաղի տոմսը՝ քանի գնում է, տարածւում է մեզ մօտ։ Այս օրերս Բերգամթաղի կենդրոնական գրադարանն էլ՝ սկսել է ծախել վիճակախաղի տոմսակներ, բոլորովին նման Լիլաւայի վիճակախաղի տոմսակներին, ուր վերայ ստորագրել են գրադարանի տեսուչ պ. պ. Ս. Ալէքսանեանցը և Մարգար Միքայէլեանցը։

—

Նոյն տեղից մեզ գրում են, այս օրերըս ս. առաջնորդը Հաֆթուանի կանանցից ստացաւ մի սրտաճմլիկ հեռագիր, որով բողոքում են այնտեղի սրիկաների ձեռքից, իբր թէ նորանք ընկել են շատ պատուաւոր կանանց յետևից բռնաբարելու նպատակով, սրբազան առաջնորդը գիմել է ուր որ հարկն է։

—

Ուաշտից մեզ գրում են. անցեալ շաբաթ Ռուսիայի փոստը բերող փոստային Ալէքսանդր III. շոգենաւը Էնզէլի մօտենալիս սարսափելի ալէկոծութեան հանդիպելով կրկին վերադառնում է Բագու իւր հետ տանելով թէ փոստը և թէ միջի մարդիկը, այդ է պատճառը. որ անցեալ շաբաթ Ռուսաստանի փոստը չը ստացուեց։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Աթէն 28 օգոստոս. Ֆրանսայի պաշտօնեաները պահել են մի խումբ մարտանաւ որ Աթէնից անցնելով գնում էր Ճապօնիա։

—Լօնդօն 28 օգոստոս. այնպէս է կարծւում և հաւատում են որ արևելեան երկու պետութիւնների (Չին և Ճապօն) միջև եղած պատերազմը այնքան շուտով չի վերջանալ, որովհետև հետզհետէ երկու կողմի ոխակալութիւնն էլ չափազանցութեան է հասնում, մանաւանդ Ճապօնացւոց մէջ յուզումը շատ է, որոնք ցանկանում են իրանց զօրքերը Պէկին դուրս հանել։ „Տայմզ“ լրագիրը հրատարակել է իւր Շանխայում ունեցած թղթակցի մի հեռագիրը, որ չինական զօրքը Կօրէայի տեղական 5000 զօրքի օգնականութեամբ Ճապօնական զօրքին ջարդ են տուել և Կալ-խունիի (40 անգ. մղ. Սըուլի հիւսիսային կողմը) բնակիչներին մեծ վնասներ են հասցրել։ Չինական զօրքը յառաջէ խաղում

—Գահիրէ 29 օգոստոս. յայտնուել է որ փաշաներից ոմանք ապախնութեան անունով դարձեալ խափշուհիներ են գնում, այդ պատճառով մի քանի նաւեր բռնուել են որոնց մէջ եղած փաշաներից երկուսը ձերբակալուել են և մէկը փախել. այդ մասին Գահիրէում մեծ յուզում է տիրում։

—Լօնդօն 1 սեպտեմբեր. տաճիկ կառավարութիւնն իտալական զօրքի Քէսալըն տիրելու համար լուրջ կերպով բողոքել է։ Փարիզի կոմսը սաստիկ հիւանդ և մահամերձ է։

—Փարիզ 1 սեպտ. Թօնքինում խռովութիւններ են ծագել, այնտեղի կառավարչապետը տեղեկագրել է Փէկինի Ֆըրանսական լիազօր դեսպանին։

—Լօնդօն 2 սեպտ. Հօլանդայի գաղթականութեանց պահեստի զօրքը այս ամսի 8-ին և 20-ին մեկնելու է արևելեան Հնդկաստանում Հօլանդային պատկանող հողերը։

—Թին-Ցին 3 սեպ. չինաց կայսրը մի հրովարտակ է հանել. որով օգոստ. 20-ին Փիրի-Գանկում չինաց զօրքի տարած յաղթութեան մասին, իւր ուրախակցութիւն է յայտնում, միևնոյն ժամանակ և հրամայում է, զօրավար Եհին և եօթ հարիւր սպաներին որ մասնակցել են այդ պատերազմում վարձատրութիւններ լինի։ Լուր է տարածուել իբր թէ զօրավար Եհը տեղեկագրել է որ այդ պատերազմում Ճապօնացիք կորցրել են 7000 հոգի մինչդեռ չինացիք հազիւ թէ միք անի հոգի կորցրած լինին։

—Լօնդօն 3 սեպտ. „Տայմզը“ Զամուլփուլից մի հեռագրալուր է հրատարակել որը յայտնում է թէ Ճապօնական զօրքը Սըուլ քաղաքին և նորա շըրջակայքին տիրել է։

—Նիւ-Եօրք 3 սեպտ. քաղաքի շրջակայքում մի մեծ անտառ է հրդեհուել, այդ հրդեհից ոչնչացել են 5000 հոգի. և շատոնք էլ ապաստանել ճահիճներում և թէ թափառելով գետը խեղդամահ են եղել։

—Գահիրէ 3 սեպտ. Շուարբի փաշան որ սևերը ծառայութեան անունով գնել և փախուստ էր տուել իւր կամքով անձնատուր է եղել և խոստովանուել է որ նորանց միմիայն իւր հարեմի ծառայութեանց համար էր գնել։ Շուարբի փաշան, միւս երկու փաշաները և վեց հոգի դերվաճառներ վաղը զինուորական դատաստանում պատժի են ենթարկուելու։

—Լօնդօն 4 սեպտ. ռուսական մի խումբ մարտանաւերի հրամայուել է գընալ Կօրէա։

—Պէտերբուրգ 4 սեպտ. այնպէս է տեսւում թէ Կօրէայի ջրերը գնացող նաւերի պաշտօնն է հսկել Ռուսիոյ հպատակների և վաճառականութեան շահերի վրայ։

—Բէրլին 4 սեպտ. Գերմանիոյ կայսրը այսօր գնացել է Քէօնիկզբէրկ նախկին կայսեր արձանը բանալու, որտեղ մեծ պատուով և ուրախութեամբ է ընդունուել։ Կայսրը իւր վերադարձին մի ատենաբանութիւն է արել նախկին կայսեր իւր հայրենիքին արած ծառայութեանց մասին և ձեռքով ցոյց տալով արձանների քաշած սրերը, աւելէ առ. այժմ թող սուրը այս արձանների զարդը լինի։

—Թէնջէ 4 սեպտ. Մարօքօից հաղորդում են որ այնտեղ մի նոր սաստիկ խռովութիւն է տեղի ունեցել և ամեն րոպէ խռովութեան հուրը աւելի բորբոքւում է։ Ղաբայէլ Մարօք քաղաքը պաշարել է որը կատարեալ ամրութիւններ չունի։ Ղաբայէլ շրջակայ քաղաքները ապստամբում և յափշտակում է։

—Լօնդօն 8 սեպտեմբեր. Փարիզի կոմսը մեռաւ։

—Շանխայ 9 սեպտ. գրում են որ ծովակալ Սինկը, հիւսիսային Չինաստանի նաւերի հրամանատարը պաշտօնանկ է եղել իւր մի քանի սխալ արարքների համար։ Փէքին քաղաքի կողմերում սաստիկ հեղեղներ են եղել։

—Վիէննա 9 սեպտ. Գալիցիայում խօլերա է յայտնուել և մեծ թւով մարդիկ ամեն օր այդ հիւանդութեան զոհեն դնում։

Արտօնատէր—Հրատարակիչ
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հայ լրագրութեան հարիւրամեայ» պատկերները հասած լինելով խնդրում է բաժանորդներից որ ներկայացնեն իրանց ստացականները եւ ստանան խմբագրութիւնից իրանց պատկերները։